

## ԱՎԱՐԱՅՐՈՒՄ

Ոտքի ելակ Աշխարհն Հայոց՝ Հայրենյաց սուրբ սիրով լի,  
Մեր ու մանուկ՝ ոգին ամբողջ Հայաստանյայց աշխարհի.  
Ոտքի ելակ Եկեղեցին հայրեռով իր սրբազն,  
Շուրբին՝ աղորք, սրտում՝ ցասում, ձեռքին՝ սուրբ հաղթական:

Ամպերի պէս Երկու հսկա բանակները լեռնացան,  
Տղմուտ զետի զույգ ափերին ծաղիկները դալկացան.  
Շնեղացին ահեղագոշ գրահները Երկուատեք,  
Ու շողացին Ավարայրում հազարավոր նետ ու տեզ:

Կովում էին բազերն հայոց այնպես հուժկու, մոլեզին,  
Որ զարկերից նրանց հզոր սարն էր թնդում ահազին.  
Զարկում էին և մեր ընկեռու մոնշյունով ահարկու,  
Խորում էին մահն իրադից՝ կյանք պարզեում մեկ-մեկու:

Ոտքի ելան բոլորը մեկ՝ հովիվ, ուամիկ ու ուաշպար,  
Վրեծով էր լցվել Հայոց Երկրում ամեն բռնի ու բար.  
Ոտքի ելակ Եկեղեցին, խաչն իր կրծին զերդ վահան,  
Շուրբին՝ աղորք, սրտում՝ ցասում, ձեռքին՝ սուրբ հաղթական:

Եվ այն օրից Աշխարհն Հայոց ծնեց Վարդան ու Արտակ,  
Որոնց կյանքով ոգի առաջ Երկիրը մեր բովանդակ.  
Ու տե՛ս, այսօր, հողագնդի ամեն ծայրում հայր կա,  
Հայը Երկնի սրտում անգամ ունի արևն իր անմահ:

Ավարայրից ծնվեց օրն այս՝ կյանքով ազատ մեկրնդմիշա,  
Որ ծաղկի է փոխն Հայոց Երկրում ամեն վերք ու վիշտ:  
Ցնծա՛, Երկի՛ր, ցնծա՛ հավերժ դրւ հաղթական աշխարհում,  
Ջի այսօր էլ ունես Ինզ հետ բաշ Վարդաններ դյուցազոն:

